

## **The Blue Lion - the One and the Only Armenian Movie With a Philatelic Plot**

by Igor Grigorian

### **«Երկնագույն Առյուծը»՝ միակ հայկական կինոնկարը**

Memory plays tricks. This is universal knowledge, and recently I rediscovered it for myself in Armenia.

Recently in Yerevan, I met with Suren Arakelov, former Chairman of the Union of Philatelists of Armenia, currently the Vice President of All-Armenian Academy of Philately and Numismatics, whom I haven't seen or spoken with for about 14 years. For those of our readers who know him, he is still very active, same philately and life loving person, striving to promote philately in all its fields, with all his strengths and at all costs.

He asked me whether I know of any movie that has been shot in Armenia with a philatelic plot. My answer was no. He reminded me of the name, *The Blue Lion*. At that moment it did not ring a bell. He gave me a copy, and I watched the film. Half an hour into the movie, I vaguely remembered seeing it long time ago. That's what I meant by "memory plays tricks" – I knew it, but I forgot, and wouldn't have recalled it, if not reminded.

A number of Armenian stamp collectors (Surik Hairapetyan, rear left, Avetik Gyodakyan, rear right) participated in the creation of the movie, Suren Arakelov was asked to become a consultant. This is one of the reasons why this movie is of great importance to the philatelic history of Armenia.

The movie was filmed in 1979, and since then the Union of Philatelists of Armenia has been trying to obtain a copy for the Union's records. The issue arose once again, when the Union's archives were being categorized to create a bibliography of Philatelic Armenika. Stamp collectors started to look for rare artifacts and interesting facts of philatelic

Հիշողությունը մարդկանց հետ կատակներ է խաղում: Դա հանրահայտ փաստ է, և ես մեկ անգամ ևս բացահայտեցի այդ ինձ համար:

Վերջերս Երևանում ես հանդիպեցի Սուրեն Առաքելովին, նախկինում Հայաստանի Ֆիլատելիստների Միության նախագահ, իսկ այժմ՝ Ֆիլատելիայի և Դրամագիտության Համահայկական Ակադեմիայի Փոխ-Նախագահ, որին չէի տեսել մոտ 14 տարի: Մեր ընթերցողներին ովքեր ճանաչում են նրան հայտնեմ որ նա մույն ակտիվ, մույն ֆիլատելիան և կյանքը սիրող մարդն է, որը ջանք ու եռանդ չի խնայում ֆիլատելիան իր բոլոր բնագավառներում զարգացնելու համար:

Նա հարցրեց, ինձ արդյոք գիտե՞մ Հայաստանում նկարահանված որևէ կինոնկար ֆիլատելիստական թեմայով: Պատասխանեցի՝ ոչ, չգիտեմ: Նա հիշեցրեց կինոնկարի անունը՝ «Երկնագույն Առյուծը»: Այդ ժամանակ դա ինձ ոչինչ չասաց: Նա ինձ մի սկավառակ տվեց, որը ես դիտեցի: Մի կես ժամ մայելուց հետո հասկացա որ տեսել եմ այդ կինոնկարը, շատ վաղուց: Ահա թե ինչու ես ասացի որ հիշողությունը մարդկանց հետ կատակներ է խաղում. դիտել էի, բայց մոռացել, և չէի հիշի եթե չհիշեցնեին:

Ֆիլմի նկարահանմանը ներգրավվել են մի խումբ հայ ֆիլատելիստներ (Սուրիկ Հայրապետյան, ետևի շարքում ձախից, Ավետիք Գյոդակյան, ետևի շարքում աջից), իսկ Սուրեն Առաքելովը հրավիրվել էր նաև որպես ֆիլմի խորհրդատու: Դա պատճառներից մեկն է թե ինչու այս նկարը կարևորագույն նշանակություն ունի Հայաստանի ֆիլատելիայի պատմության համար:

Ֆիլմը նկարահանվել է 1979 թվականին, և այդ ժամանակից ի վեր Հայաստանի Ֆիլատելիստների Միությունը փորձում է ձեռք բերել ֆիլմի կրկնօրինակը իր արխիվի համար: Հարցը կրկին օրակարգային դարձավ, երբ ֆիլատելիստական Արմենիկայի մատենագրությունը կազմելու նպատակով սկսվեց միության արխիվների նյութերի գրանցումը: Ֆիլատելիստները ջանք չէին խնայում ֆիլատելիայի պատմության հազվագյուտ իրերի և փաստերի, այդ թվում և վերոհիշյալ կինոնկարի որոնման համար: Պ-ն Առաքելովը փնտրումներին ընդգրկեց նաև 390-րդ Հրաձգային Հայկական Դիվիզիայի իր համագնդեցում՝ Լյուդվիգ Քոչարյանին և նրա որդուն, Հանրապետական Կիմոֆոտոարխիվի տնօրենին: Փնտրում էին համառ, բայց ապարդյուն: Նույնիսկ Մոս Սարգսյանը, ֆիլմի գլխավոր դերակատարը, չկարողացավ օգնել ֆիլմը հայթհայթելու գործում:

Թվում էր թե բոլոր փնտրումները ապարդյուն էին, երբ Ռուսական ԻՏԱՈ-ՏԱՍՍ լրատվական գործակալության սեփական թղթակից Տիգրան Լիլյույանը





history, as well as for a copy of the movie. Through his fellow-officer at 390 Infantry Armenian Division, Ludvig Kocharyan and his son, who served as director of Republic Cinema & Photo Archive, Mr. Arakelov was trying to obtain a copy of the movie for the Union's archive. The search was persistent but fruitless. Even People's Artist Sos Sarkissian who played the leading role in the movie, was not able to help.

When all avenues were exhausted, correspondent of the Russian news agency, ITAR-TASS, Tigran Liloyan, came up with an unexpected, but delightful, surprise – he presented a DVD copy of the movie to the All-Armenian Academy of Philately and Numismatics.

The movie was made at the request of the USSR Cinematographic Ministry (thus the language of the movie – Russian) at Armenfilm movie studio in 1979. Script writers, A. Kalantaryan and G. Markaryan, based the movie on *Blue Mauritius*, a novel by Yu. Stepanov and Yu. Perov.

In the beginning, the movie depicts a stamp show and award ceremony, where we see Surik Hairapetyan and Avetik Gyodakyan portray jury members, while Suren Arakelov portrays the jury chairman. He hands the Grand Prix of the exhibition to Professor Ter-Gabrielian, and later gives an interview to a correspondent where he describes the value of the gem of the collection, a stamp from Guiana attached to an envelope (Scott # 16). There are only three of them known in the world, and Professor Ter-Gabrielian got his stamp from his grandfather who visited Guiana as a member of a charitable mission. “The Jeweler” (Sos Sarkissyan) decides to steal the famous envelope while the Professor flies on a business trip to Prague. With his accomplice, “The Electrician” (A. Santosyan) he enters the Professor's apartment and finds the envelope after a thorough search through stockbooks. A chain of events followed by a flood in the apartment below, dispatch of the maintenance man Tigran, portrayed by V. Nahapetyan, his determination to summon the police, finds him escaping by rooftops, with his accomplice, right into the hands of the police. The stockbook with the Guiana rarity is returned to its rightful owner.

For those who would like to know the cast and film makers, the information is as follows:

*Producer & Director* – G. Markarian  
*Director* – Zh. Hovsepyan  
*Cameraman* – G. Hairapetov  
*Second Cameraman* – S. Sarkissyan


հանդես եկավ անսպասելի, բայց շատ հաճելի մի անակնկալով՝ հանձնելով Ֆիլատելիայի և Դրամագիտության Համահայկական Ակադեմիային ֆիլմի կրկնօրինակը սկավառակի վրա:

Ֆիլմը նկարահանվել է 1979 թ. ‘Հայֆիլմ’ կինոստուդիայում ԽՍՀՄ Կինեմատոգրաֆիայի նախարարության պատվերով, ահա քե ինչու ֆիլմը նկարահանվել է Ռուսերեն լեզվով: Ֆիլմի սցենարում հեղինակներ Ա. Քալանթարյանը և Գ. Մարգարյանը օգտագործել են Յու. Ստեպանովի և Յու. Սերովի ‘*Երկնագույն Մավրիկի*’ վիպակի մոտիվները:

Ֆիլմը սկսվում է ֆիլատելիստական ցուցահանդեսի և նրա դափնեհանդեսի ցուցադրմամբ, որտեղ մենք տեսնում ենք Սուրիկ Հայրապետյանին և Ավետիք Գյոդակյանին իբրև ժյուրիի անդամներ, և Սուրեն Առաքելովին իբրև ժյուրիի նախագահ: Նա հանձնում է ցուցահանդեսի գլխավոր մրցանակը պրոֆեսոր Տեր-Գաբրիելյանին, ապա մի թղթակցին տրված հարցազրույցի ժամանակ բացահայտում է նրա ցուցանմուշի գոհարի՝ ծրարին փակցված Գվիանայի մի նամակահիշի արժեքը: Միայն երեք նմուշ է հայտնի աշխարհում, և պրոֆեսորը ժառանգել է իրենը իր պապից, որը բարեգործական առաքելության կազմում եղել է Գվիանայում: ‘Ոսկերիչը’ (Սոս Մարգարյան) մտադրվում է գողանալ այդ հռչակավոր ծրարը, օգտվելով այն բանից որ պրոֆեսորը մեկնելու է Պրահա գործուղման: Իր օգնական ‘Մարիչի’ (Ա. Սանթրոսյան) հետ միասին նա քափանցում է պրոֆեսորի բնակարանը և ալբոմները մանրակրկիտ զննելու արդյունքում գտնում այդ ծրարը: Հետագա իրադարձությունների շարանը՝ ջրի հոսքը ցած՝ հարևան նկարչուհու տուն, հանձնարարականը ԲԾՏ-ի հերթապահի փականագործ Տիգրանին (Վ. Նահապետյան) վերացնել վթարը, վերջինիս համառությունը միլիցիա կանչելու գործում, և այլն) ստիպում են ‘Ոսկերիչին’ ու նրա օգնականին ճողոպրել տանիքներով, բայց ընկնում են վրա հասած միլիցիայի աշխատակիցների ձեռքը: Գվիանայի հազվագյուտ նմուշը հանձնվում է իր օրինական տիրոջը:







Composer – G. Melikyan  
Stage Artist – M. Antonyan  
Editor – D. Muradyan  
Stage Managers – N. Asatryan & E. Bagdasarov  
Jeweler – Sos Sarkissyan  
Tigran – V. Nahapetyan  
Gayane – A. Ghukasyan  
Electrician – A. Santrosyan  
Precinct Policeman – S. Adjapkhanyan  
Artist – A. Kaplandjyan  
Professor – A. Aslanyan  
Daily Helper – V. Varderesyan

Although the movie was made 28 years ago, it is a part of our philatelic heritage, and should be known and appreciated by Armenian philatelists worldwide. A special thanks goes to Tigran Liloyan, who was able to retrieve the movie and transfer it to DVD format. I hereby present a copy of the movie to ArPA for safekeeping.



Ֆիլմի հեղինակներով և խաղակազմով հետաքրքրվողներին ներկայացնենք այն.

Բեմադրող ռեժիսոր՝ Գ. Մարգարան  
Ռեժիսոր՝ Ժ. Հովսեփյան  
Բեմադրող օպերատոր՝ Գ. Հայրապետով  
Օպերատոր՝ Ս. Սարգսյան  
Կոմպոզիտոր՝ Գ. Մելիքյան  
Բեմադրող նկարիչ՝ Մ. Անտոնյան  
Խմբագիր՝ Դ. Մուրադյան  
Տնօրեններ՝ Ն. Ասատրյան և Է. Բաղդասարով



Պսակերիչ՝ Սոս Սարգսյան  
Տիգրան՝ Վ. Նահապետյան  
Գայանե՝ Ա. Դուկասյան  
Սարիչ՝ Ա. Սանթրոսյան  
Թադային՝ Ա. Աջապխանյան  
Նկարչուհի՝ Ա. Դավիթանյան  
Պրոֆեսոր՝ Ա. Ասլանյան  
Տնային աշխատողուհի՝ Վ. Վարդերեսյան

Հնալսած այն փաստին, որ ֆիլմը նկարահանվել է 28 տարի առաջ, այն հանդիսանում է մեր ֆիլատելիստական ժառանգության մասնիկը, և պետք է ճանաչվի և արժեքավորվի աշխարհի հայ ֆիլատելիստների շրջանում իբրև այդպիսին: Հատուկ շնորհակալություն Տիգրան Լիլոյանին ֆիլմը հայթհայթելու և սկավառակի վրա անցկացնելու համար: Ես շատ ուրախ եմ, որ կարող եմ ֆիլմի մի կրկնօրինակը տրամադրել ԱրՓԱ-ին: